

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԼԵԶՎԱՐԱՆԸ
(ակադեմիկոս էդ. Աղայանի ծննդյան 70-ամյակը)



Լրացավ հայ լեզվաբանության ամենակա-
նավոր և ակնառու դեմքերից մեկի՝ էդուարդ
Բագրատի Աղայանի ծննդյան 70 տարին:

Է. Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին,
Մեղրիում: Միջնակարգ կրթությունն ստանալով
ծննդավայրում՝ նա 1933-ին ընդունվում է Երե-
վանի պետական համալսարանի բանասիրական
ֆակուլտետը և այն ավարտում 1938-ին: 1939
թվականից համալսարանում դասավանդել է զը-
րարար, լատիներեն, պարսկերեն, լեզվաբանու-
թյան ներածություն, հայերենի համեմատական
քերականություն, ժամանակակից հայոց լեզու,
ընդհանուր լեզվաբանություն առարկաները: Նա
1941-ին պաշտպանում է «Մեղրու բարբառը»
թեկնածուական դիսերտացիան, 1942-ին ստա-
նում զոցեհեռի կոչում: 1945-ին պաշտպանելով
«Հայ լեզվաբանության պատմություն» դիսերտա-
ցիան՝ ստանում է բանասիրական գիտություն-
ների դոկտորի աստիճան, իսկ հաջորդ տարին՝
պրոֆեսորի կոչում: Է. Աղայանը 1956 թվակա-
նից համալսարանի ընդհանուր լեզվաբանության
ամբիոնի, իսկ 1962 թվականից՝ Հ. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համե-
մատական լեզվաբանության բաժնի վարիչն է:
Նա 1953-ին ընտրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Թղթակից անդամ, 1982-ին՝ իսկական անդամ:
1970-ին նրան շնորհվում է Հայկական ՍՍՀ գի-
տության վաստակավոր գործչի կոչում:

Նշելով է. Աղայանի ծննդյան հորեւյանը՝ հայ
գիտական-լեզվաբանական հասարակացություն-
նր ի գեմս նրա տեսնում է գիտությանը անսա-
մանորեն նվիրված մշակի, որն իր ողջ գիտակ-
ցական կյանքը, բնությունից իրեն շտապված բն-
դոնակություններն ու ասղանդը ոգևորությամբ
ի սպաս է գրել հայ լեզվաբանության զարգաց-
ման գործին, հայոց լեզվի ուսումնասիրության
գործին: Եվ այսօր մի հայացք պցելով հորելարի
անցած գիտական ուզու ու վաստակի վրա՝ ամե-
նայն վստահությամբ կարող ենք ասել, որ է.
Աղայանի անունը կարելի է դնել հայերենագի-
տության բարձունքներում կանգնած և իրենց
անթառամ փառքով պսակած ամենանվիրական ու
պատկառանք ներշնչող անունների կողքին:

Կանգնած լինելով հայ դասական ու նոր լեզ-
վաբանության սահմանագծին՝ է. Աղայանը մի
կողմից հանդիսացել է հայ դասական լեզվաբա-
նության լավագույն ավանդույթների բեղմնավոր
շարունակողը, մյուս կողմից՝ աշխատել է ընդ-
հանուր լեզվաբանական գիտության զարգացմա-
նը զուգընթաց՝ ընթանալ նորի որոնման դժվա-
րին ուղիներով և հայոց լեզվի ուսումնասիրու-
թյան խնդիրներին մոտենալ նոր՝ կառուցված-
քային լեզվաբանության հայեցակետերից, լեզ-
վաբանական մի ուղղություն, որի սկզբնավորող-
ներից մեկը հայ իրականության մեջ է. Աղայանն
է:

Զափազանց բեղմնավոր է ու արգասավոր Ա-
ղայան լեզվաբան-գիտնականը, լայն են նրա գի-
տական հետաքրքրությունների շրջանակները,
բազմազան են այն բնագավառները, որոնք նա
ընդգրկել է իր գիտական գործունեության ըն-
թացքում: Ընդհանուր լեզվաբանություն, հայե-
րենի նկարագրական, պատմական ու համեմա-
տական քերականություն, բառագիտություն և
ստուգաբանություն, հայոց լեզվի պատմություն,
հայ բարբառագիտություն, բառարանագրություն,
հայ լեզվաբանության պատմություն, — ահա այն
գլխավոր բնագավառները, որոնցով զրաղվել է
խորհամուտ լեզվաբանի անհանգիստ ու պրպտող
միտքը:

Սակայն այս բոլորի մեջ է. Աղայանի գի-
տական հետաքրքրությունների կիզակետն է եղել
ընդհանուր լեզվաբանությունը, որն իր մեջ ընդ-
գրկելով առանձին լեզուների, լեզվական խմբերի
ու ընտանիքների հետազոտությունների ընդհան-
րացումը, նպատակ ունի պարզելու ու գտնելու
լեզվական երևույթներն առաջ բերող պատճառ-
ները, բազմազան լեզվական երևույթների միջև
եղած կապերը, նրանց փոխադարձ պայմանա-
վորվածությունը և, այսպիսով, երևան բերելու

մարդկային լեզվի զարգացման ընդհանուր օրինակաբանությունները:

Տիրապետելով մի շարք լեզուների, ծանոթ լինելով առանձին լեզուների և լեզվաբանասիրների հետազոտության բնագավառում կատարված աշխատանքներին, այլև խորապես ուսումնասիրելով լեզվաբանական տեսական գրականությունը՝ է. Աղայանն ընդհանուր լեզվաբանության բնագավառում ասել է իր խոսքը և այն էլ՝ ծանրակշիռ խոսքը: Այդ ուղղությամբ նրա կատարած հետազոտությունների արդյունքները ամփոփված են «Լեզվաբանության ներածություն» սովորաբանագրքում, որն ունեցել է մի քանի հրատարակություն. Թարգմանվել է նաև ռուսերեն և, այսպիսով, ստույգի նաև համաժողովրդական ճանաչում:

Հայերեն լեզվով հրատարակված ընդհանուր լեզվաբանական աշխատությունների մեջ այս ուսումնասիրությունը առանձին տեղ է գրավում և՛ լեզվաբանական պրոբլեմների համակողմանի ընդգրկմամբ, և՛ ամենարագմազան լեզուների հրեշտակական, քերականական, բառակազմական և այլ նրևույթների ներկայացմամբ ու քննությունը: Եթե կարելի է այսպես արտահայտվել, այս աշխատությունը լեզվաբանության բնական ներածություն է այն իմաստով, որ հեղինակը ոչ միայն շարադրում ու ներկայացնում է վերոհիշյալ հարցերն ու պրոբլեմները, այլև քննում է առանձին լեզվաբանների ու լեզվաբանական տարբեր դպրոցների այդ խնդիրների մասին արտահայտած կարծիքներն ու դրույթները՝ նորագույն լեզվաբանության հայեցակետերից դրականորեն գնահատելով դրանք կամ իր քննադատական վերաբերմունքն արտահայտելով դրանց նկատմամբ: Գորում հատուկ կարևորություն ու հետաքրքրություն են ներկայացնում այն հատվածները, որոնք նվիրված են լեզվաբանական մեթոդների, այն է՝ պատմահամեմատական, ընդհանուր համեմատությունների ու գաղափարական վերլուծության, նկարագրական կամ կառուցվածքային և լեզվաբանական աշխարհագրության մեթոդների, բննումյանն ու վերլուծությանը: Ամբողջ շարադրանքը տարվում է այն ուղղությամբ, որից բխում է այն ակնհերև ճշմարտությունը, որ հետազոտական այս մեթոդները ոչ թե բացառում, այլ փոխադարձաբար լրացնում են միմյանց՝ հնարավորություն ստեղծելով մարդկային լեզվի համակողմանի ուսումնասիրության համար: Բայց այդ բոլորով հանդերձ զգացվում է, որ գլխավորապես իրավացիորեն հատուկ համակարգում է տաժում պատմահամեմատական մեթոդի նկատմամբ, որով է պայմանավորված էր լեզվաբանության, որպես ինքնուրույն գիտության, առաջացումը անցյալ դարի սկզբում:

Քննելով լեզվի համաժողովրդական և պատմական ուսումնասիրության հայեցակետերը, որոնց մասին երկար բանավեճեր են եղել, է. Աղայանը

ևր եզրակացնում է. «Պատմական և համաժողովրդական (դիախրոնիան ու սինխրոնիան) իրար հակասող, իրար բացառող մտոեցումներ չեն, այլ լեզվի գիտության երկու անհրաժեշտ կողմերը, որոնց զուգակցումը կարող է միայն ապահովել այդ գիտության բարձր մակարդակը: Եթե առաջին մտոեցման համար կիրառվում է պատմահամեմատական մեթոդը, ապա երկրորդի համար գործադրվում է կառուցվածքային (ստրուկտուրալ) կամ նկարագրական մեթոդը, որ լիովին արդարացնում է իրեն: Մնում է ավելացնել, որ կառուցվածքային մեթոդի գործադրումը մեծապես նպաստում է նաև պատմական ուսումնասիրությունների առջև կանգնած շատ հարցերի ավելի ճիշտ լուսաբանմանը»:

Հատուկ պետք է շեշտել «Լեզվաբանության ներածություն», ինչպես և է. Աղայանի լեզվաբանական մյուս ուսումնասիրությունների կարեվոր, էական հատկանիշներից մեկը. դա խորը գիտականության և մատչելի լեզվի ու պարզ շարադրանքի զուգակցումն է:

Մեծ է գիտնականի վաստակն ու ներդրումը նայոց լեզվի բերականության ուսումնասիրությանը բնագավառում: Է. Աղայանի՝ այս ուղղությամբ կատարած աշխատանքների մեջ հատուկ արժեք են ներկայացնում «Գրաբարի քերականություն» և «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» մենագրությունները:

Ըստ հեղինակի ծրագրի՝ գրաբարի քերականությունը պետք է ամփոփվի չորս գրքերի մեջ՝ ա) Հնչյունաբանություն, բ) Ձևաբանություն, գ) Շարահյուսություն, դ) Բառագիտություն: 1964-ին լույս տեսած «Գրաբարի քերականություն» առաջին գիրքը նվիրված է մեր հին լեզվի հնչյունաբանության ուսումնասիրությանը: Մատչելի ձևով ներկայացնելով ժամանակակից հնչյունաբանության տեսության հիմունքները՝ հեղինակն անցնում է գրաբարի հնչյունային համակարգի՝ ձայնավորների, կրկարբառների, բաղաձայնների ու ձայնավորների վերլուծությանը և ապա՝ հնչյունների տարբերակիչ հատկանիշների քննությանը: Այնուհետև տրվում են գրաբարյան հնչյունների արտասանության, բառակազմի ու բառավորի կազմության, վանկի և շեշտի ու ելևելավորման (ինտոնացիա) քննադրությունը նա առանձին բաժնով քննում է հնչյունափոխության երևույթները և ընդունում գրաբարի հնչյունափոխության երկու տեսակ՝ հերթագայական լծողություններ, օրինակ՝ սիրտ—սրտի, հուր—հրոյ, աստղ—աստեղ, դեղ—դիզի, ցոհեան—ցոհեոյ, լոյս—լուսատուր և այլն, և ազատ լծողություններ, օրինակ՝ գեղ—գիւղ, առեւ—առիւ, լիզուլ—լիզուլ և այլն: Իրեն հատուկ ոգևորությամբ են գրված գրքի այն

1 է. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, Ե., 1967, էջ 107:

հատվածները, որոնք նվիրված են մեսրոպյան աշ-
րուրենի և մեսրոպյան ուղղափառության քննու-
թյանը:

Գրաբարի ուսումնասիրությանը զբաղվել են
և՛ հայ, և՛ օտարազգի շատ մեծ լեզվաբաններ:
Բայց և նրանցից ոչ մեկի ուսումնասիրության
մեջ գրաբարի հնչյունարանությունը չի ներկա-
յանում իր ամբողջական, համարյա կատարյալ
տեսքով, ինչ տեսնում ենք այս աշխատության
մեջ: Եվ այս հանգամանքը միանգամայն հասկա-
նալի է դառնում, երբ նկատի ենք ունենում, որ
է. Աղայանի գրաբարի հնչյունական համակար-
գը բննել է անցյալի բերականության արժեքա-
վոր ու լավագույն ավանդույթների օգտագործու-
մով և նորագույն հնչյունարանության տեսական
դրույթների և հետազոտության նորագույն մե-
թոդների կիրառումով:

Արդի հայերենի ձևաբանական համակարգի
քննությանն է նվիրված է. Աղայանի «Ժամանա-
կակից հայերենի հոլովումը և խոնարհումը. կա-
ռուցվածքային վերլուծություն» (1967) աշխա-
տությունը: Ելնելով նրանից, որ լեզվաբանա-
կան նոր ուղղությունը՝ կառուցվածքային լեզվա-
բանությունը, մեզանում իր առաջին քայլերն է
անում, հեղինակն իր գրքի ընդարձակ ներածու-
թյան մեջ փաստորեն շարադրել է այդ նոր ուղ-
ղության հիմնական դրույթները՝ շատ հարցերում
էլ առաջ քաշելով իր ինքնուրույն մտածելուն ար-
տահայտող տեսակետները: Ինչպես հայտնի է,
կառուցվածքային լեզվաբանության հիմնական
հասկացություններից մեկը լեզվական մակար-
դակների հասկացությունն է: Լեզվի բաղադրիչ-
ները կազմում են իրար հետ փոխադարձաբար
կապված և միմյանցով պայմանավորված համա-
կարգեր: Այդ բաղադրիչները իրար նկատմամբ
գտնվում են ստորադասության կամ գերադասու-
թյան հարաբերության մեջ, այսինքն՝ ավելի ցած-
րը կարգի միավորները ստորադասվում և ժա-
ռայում են ավելի բարձր կարգի միավորներին,
որոնց կազմում և նրանք անջատվում են: Այսպես
օրինակ՝ լեզվի հնչյունային համակարգը ստորա-
դասվում է ձևույթային համակարգին և ծառա-
յում է ձևույթների կազմելուն, ձևույթային մա-
կարդակը ստորադասվում է բառային մակար-
դակին և ծառայում է բառեր կազմելուն և այլն:

Նկատի ունենալով, որ լեզվի ձևաբանական
մակարդակը անխզելիորեն կապված է ձևույթա-
յին և բառային մակարդակների հետ՝ հեղինակը
տալիս է այդ մակարդակների տեսությունն ա-
ռանձին-առանձին, որոշում դրանցից յուրաքանչ-
յուրի միավորները և զրանց իմաստային-գոր-
ծառական հատկանիշները: Աշխատության այս
մասիում առանձին հետաքրքրություն է ներկա-
յացնում խոսքի մասերի դասակարգման հարցը:
Բառերի դասակարգման համար հիմք ընդունելով
նրանց իմաստային ու գործառական որոշակի
հատկանիշները և առաջնորդվելով երկանգամ

հակադրությունների մեթոդով (օրինակ՝ հասկա-
ցական իմաստ—ոչ հասկացական իմաստ, տար-
բերակված իմաստ—չտարբերակված իմաստ, ա-
ռարկայնություն—որակայնություն և այլն)՝ հե-
ղինակը հայերենում ընդունում է 11 խոսքի մաս՝
գոյական, ածական, թվական, դերանուն, բայ,
մակրայ, ձայնարկություն, եղանակավորող բա-
ռեր, կապ, շաղկապ և նմանաձայնություն:

Անցնելով բառի ձևույթաբանական կազմի բը-
նութագրմանը և այն բնորոշելով «Ժատական ա-
ծանց + ածանց + արմատ + ածանց + ածանց» ընդ-
հանուր սխեմայով՝ է. Աղայանը նշում է, որ այս
սխեմայի տարրերը, բացի առաջինից, կարող են
կրկնվել 2 կամ 3 անգամ և այսպիսով առա-
ջացնել բառակազմական բազմաթիվ տիպեր, ո-
րոնցից ինքը բերում է բնորոշները (14 տիպ)՝ 1.
տուն, ծառ, լավ, 2. ջրկիր, հացթուխ, տնտես, 3.
մակդիր, անվարժ, 4. հողային, բերք, բան-
վոր, 5. ստորերկրյա, ընդգրկում, 6. անբրանկան,
վերադասավորում, 7. տնտեսություն, հոգատա-
րություն, 8. տնտեսվար, լրագրավաճառ, 9. տնայ-
նագործ, գործարանատեր, 10. ընթացք, մոռա-
ցություն, 11. գրող, հատած, 12. զգացված, ըզ-
գացվածություն, 13. անբավարարվածություն,
գերբնակվածություն, 14. անհաղթահարելիություն,
անվերժանելիություն: Հասկանալի է, որ հայե-
րենի բառակազմական տիպերի այսպիսի ընդ-
հանրական ներկայացումը դուռ է բացում նորա-
նոր ուսումնասիրությունների համար:

Լեզվի ձևաբանական մակարդակի քննության
և բնութագրման կապակցությամբ արգասավոր
են է. Աղայանի հետևյալ եզրակացությունները.
ա) եթե տվյալ բերականական իմաստն արտա-
հայտվում է ձևաբանական մակարդակում՝ իրեն
հատուկ բառաձևով, ապա նա ձևաբանական կարգ
է. բ) եթե տվյալ բերականական իմաստն ար-
տահայտվում է միայն շարահյուսական մակար-
դակում՝ նախադասության մեջ բառերի հարա-
բերությամբ կամ շարահյուսական այլ միջոցնե-
րով, ապա նա շարահյուսական կարգ է. գ) ձևա-
բանական կարգը կարող է նույնությամբ հանդես
գալ շարահյուսական մակարդակում և դառնալ
նաև շարահյուսական կարգ:

Իր որոնքում և վերևում ընդհանուր ձևով
ներկայացված տեսական սկզբունքներից ելնելով՝
է. Աղայանը քննում է ժամանակակից հայերենի
հոլովման և խոնարհման համակարգերը: Նա
միանգամայն իրավացիորեն գտնում է, որ այս-
պիսի կոչված հայցականը շունի իր առանձին, ան-
կախ ու ինքնուրույն ձևը և, հետևաբար, առան-
ձին հոլով կոչվելու իրավունք չունի: Այսպիսով,
արդի հայերենում կա 6 հոլով: Քանի որ յուրա-
քանչյուր հոլով արտահայտում է ոչ թե մեկ, այլ
մեկից ավելի շարահյուսական հարաբերություն-

2 Տե՛ս «Ժամանակակից հայերենի հոլովումը
և խոնարհումը», էջ 105:

ներ, դրանց ինքնին բխում է, որ հողովները շարահյուսորեն շարունակաբար է բնորոշվեն, ասենք, ուղղակիորեն ենթակառուցված հողովն է, բացառականորեն անշատման խնդրի հողովն է և այլն, մի հանգամանք, որ հին քերականության թերությունն է: Հողովները սահմանելիս է. Աղայանը ելնում է նրանց արտահայտման ընդհանուր ձևարանական իմաստից՝ ուղղակիորեն իմաստը բնորոշելով որպես բացարձակ, սեռականներ՝ վերագրման, տրականներ՝ հանգաման, բացառականներ՝ ելման, գործիականներ՝ իրացման, իսկ ներգոյականներ՝ սահմանափակման իմաստ է. Աղայանն այնուհետև ներկայացնում է ժամանակակից հայերենի անվանական ու դերանվանական հողովումների ամբողջական, կարելի է ասել համարյա սպառիչ նկարագրությունը:

Մանրակրկիտությամբ բնութայն առնելով նաև հայերենի բայական համակարգը, այն է՝ բայականությունը, հիմքականությունը, ձևականությունը, եղանակային ձևերը և ժամանակները՝ գիտնականը առաջ է քաշում մի շարք արգասավոր գաղափարներ, որոնք հետազգայում ընդհանուր ճանաչում ու ընդունելություն են գտնում: Գրանցից մենք հատկապես կուզենք նշել դերայինների ըմբռնման ու դասակարգման խնդիրը: Այս հարցում հին քերականության թերությունն այն էր, որ բոլոր դերայինները քննվում էին նույն հարթության վրա՝ անտես առնելով տարբեր դերայինների կամ դերայինների տարբեր խմբերի իմաստային ու կիրառական առանձնահատկությունները: Հենց վերջին հանգամանքը նկատի ունենալով՝ է. Աղայանը ժամանակակից հայերենում ընդունում է 10 դերայի՝ դրանք խմբավորելով հետևյալ ձևով. 1. բացարձակ կամ ընդհանուր—անորոշ, 2. կերպային—անկատար, վաղակատար, կատարելի, ժխտման, 3. վիճակային—ա) որոշական՝ ենթակայական, հարակատար, ապառնի, բ) մտկերայական, ձևի (վերապահություն)՝, Գերբայների այս դասակարգումը, միայն տեղիներին փոփոխությամբ, ամուր արմատներ է արձակել արդի հայերենի քերականագիտության մեջ:

Է. Աղայանի գիտական հետաքրքրությունների մյուս բնագավառը ժամանակակից հայերենի բացառականությունն է, որը լեզվի բառերի ու բառապաշարի ընդհանուր ուսումնքն է: Ինչպես ինքն է սահմանում, բառագիտության բաղկացուցիչ մասերն են բառապաշարի ընդհանուր տեսությունը, նրա դասակարգությունը տարբեր մտեցումներով. տեղի ունեցող տեղաշարժերի ջրնությունը, բառերի տարբեր դասակարգումները ձևական, իմաստային ու գործառական հատկանիշներով, բառակազմությունը, իմաստաբանությունը, ինչպես և՛ բառարանագրությունը: Այս բոլոր հարցերը խորությամբ ու բազմակողմա-

նորոն ներկայացվում ու քննվում են բուհերի ուսանողության համար որպես դասագիրք հաստատված «Հայոց լեզու, I մաս, Ա պրակ» (1980) աշխատության մեջ, որի «Բառագիտություն» բաժինը գրել է Աղայանը:

Հայերենի պատմության, պատմաձևմանատական փոփոխության և ստուգաբանության հարցերին են նվիրված հեղինակի մի շարք արժեքավոր աշխատանքներ, որոնցից են՝ «Պատմահամահայերենական մեթոդը լեզվաբանության մեջ» (1957), «Հ. Աճառյանը և իր «Լիակատար քերականություն» ներածությունը»⁴, «Հայոց լեզվի պատմության հարցերը նորագույն ուսումնասիրություններում»⁵, «Գրաբարի պատմության շրջաբանում»⁶, «Հին հայերենի ել—ի, ել—եալ (եօ) հնչյունափոխությունները»⁷, «Բառաքնական և ստուգաբանական դիտողություններ» (1974), «Մասնավորապես հայ գրի ու գրականության, մեքենայական այբուբենի և հարակից հարցերի մասին» (1977) և այլն:

Է. Աղայանը իր վաստակն ունի նաև զրպարոցական փոփոխության և նորագրքերի ըստեղծման մեջ: Նա Հ. Բարսեղյանի հետ միասին հեղինակն է 5—7-րդ դասարանների և 4-րդ դասարանի հայոց լեզվի քերականության դասագրքերի, որոնցից առաջինը 1965 թվից, իսկ երկրորդը՝ 1970 թվից անընդհատ վերահրատարակվել են:

Հայ բարբառագիտության հարցերը անընդհատ գտնվել են է. Աղայանի գիտական հետաքրքրությունների շրջանակներում: Դեռևս 1941 թ. պաշտպանած նրա թեկնածուական դիսերտացիան նվիրված էր մայրենի՝ Մեղրու բարբառի քննությանը, որը հրատարակվեց նույն թվականին՝ համալսարանի «Գիտական աշխատությունների» 19-րդ համարում: Ամբողջացնելով բարբառի ուսումնասիրությունը, կատարելով անհրաժեշտ փոփոխություններ ու լրավումներ և ուսումնասիրությանը կցելով բարբառային նմուշներ՝ «Մեղրու բարբառը» աշխատությունը երկրորդ հրատարակությամբ լույս տեսավ 1954 թվին: Հայերենի առանձին բարբառներին նվիրված մենագրական ուսումնասիրությունների մեջ այս աշխատանքն աչքի է ընկնում իր առավել մանրակրկիտությամբ և վերլուծվող փաստական նյութի հարստությամբ:

Աշխատության վերջում հեղինակը քննում է նաև հայերենի բարբառների դասակարգման հար-

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, ներածություն, Ե., 1955:

⁵ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 1:

⁶ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1974, № 2:

⁷ Տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, № 2:

ցը և հիմք ընդունելով բարբառների ամենահիմնական ձևաբանական հատկանիշը՝ բայի սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի կազմության եղանակը (սկզբունքը)՝ հայերեն բոլոր բարբառները բաժանում է երկու ճյուղի՝ դերբայական կազմությանը ներկայով բարբառներ և գրարարակերպ մասնիկավոր կազմությանը բարբառներ, որոնցից առաջինը ստորաբաժանվում է ՌԻՄ, ԵԼ և Ս ենթաճյուղերի, իսկ երկրորդը՝ ԿԸ, ԿԱ և ՀԱ ենթաճյուղերի:

է. Աղայանը իր մի շարք աշխատություններում անդրադարձել է նաև հայ բարբառների առաջացման ու ծագման հարցերի քննությանը: Այս խնդրում նա կանգնած է հնդեվրոպական հայագիտության կողմից սահմանված և Հ. Աճառյանի բազմաթիվ ուսումնասիրություններում լուսարանված ու հաստատված այն անխախտ դրույթի վրա, որ հայերեն բարբառները գրարարից ավելի հին վիճակ չեն ներկայացնում և չեն էլ կարող ներկայացնել, որովհետև չի կարող մի լեզվի նոր վիճակն ավելի հին լինել, քան այդ լեզվի հին վիճակը: Հայերենի բարբառները մինչև 10—11-րդ դարերը ուժեղ կերպով տարբերակված չէին, և ժամանակակից բարբառների հիմնական հատկանիշները ձևավորվել են այդ դարերից հետո: Պարզ ասած՝ բոլոր բարբառները, լինելով հայերենի նոր վիճակի արտահայտություն, ներկայացնում են գրարարի, այսինքն հին հայերենի հետագա զարգացումն ու ձևափոխությունը տարրեր ուղիներով ու ճանապարհներով: Իհարկե, այսպիսի հարցադրմամբ չի բացառվում այն, որ բարբառային առանձին, եզակի գծեր կարող են գրարարում ավանդված ձևերից ավելի հին լինել: Տվյալ դեպքում խոսքը գնում է ընդհանուր համակարգի մասին: Այս խնդիրները կոնկրետ լեզվական փաստերով հիմնավորված են հեղինակի հատկապես «Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին»⁸ և «О генезисе армянского консонантизма» հոդվածներում⁹:

է. Աղայանի գիտական գործունեության բրնազավառներից մեկն էլ հայ լեզվաբանական մտքի ուսումնասիրությունն է, որին է նվիրված նրա «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատորանոց աշխատությունը (1958—1962 թթ.): Առաջին հատորի ընդարձակ ներածության մեջ հեղինակն ընդհանուր գծերով ներկայացնում է լեզվաբանական գիտության զարգացման ընթացքը՝ հին դարերից սկսած մինչև 19-րդ դարի առաջին քառորդը իրավացիորեն համարելով լեզվաբանության, որպես ինքնուրույն գիտության, նախապատրաստման շրջան: Այնուհետև նա տալիս է մի ամփոփ տեսություն 19-րդ դարից սկսած

մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակները լեզվաբանական հիմնական ուղղությունների ու դպրոցների և դրանց առավել աչրի ընկնող ներկայացուցիչների աշխատությունների մասին: Աշխատության այս մասերը արժեք են ներկայացնում ոչ միայն այն տեսակետից, որ հայ ընթերցողին ծանոթացնում են լեզվաբանական գիտության անցած ուղու հետ, այլև այն տեսակետից, որ հայ լեզվաբանությունը, լինելով ընդհանուր լեզվաբանության պատմության մի մասը, նրանից անկախ ու առանձին ուսումնասիրվել ու ներկայացվել չի կարող:

է. Աղայանը հայ լեզվաբանության պատմությունը ժամանակագրական և մեթոդաբանական տեսակետից բաժանում է երեք շրջանի. առաջին շրջանն սկսվում է 5-րդ դարից և հասնում մինչև 19-րդ դարի սկիզբները. երկրորդ շրջանն սկսվում է 19-րդ դարի սկիզբներից, երր ձևավորվում է լեզվաբանությունն իրեն ինքնուրույն գիտություն, և տարածվում մինչև մեր օրերը. երրորդ շրջանը ձևավորվում է մեր երկրում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո և կոչվում է սովետական շրջան:

Այս երեք շրջաններից յուրաքանչյուրը ունի իր առանձին ուղղությունները, առանձին զբաղությունները, որոնք իրարից տարբերվում են ինչպես ընդհանուր լեզվաբանական, տեսական, այնպես էլ հայոց լեզվի ուսումնասիրության հիմնական հարցերում: Իրեն հայոց լեզվի ուսումնասիրության ամենակարևոր խնդիր ընդունելով հայոց լեզվի ցեղակցության, նրա ծագման խնդիրը է. Աղայանը ըստ այդմ էլ բաժանում է հայ լեզվաբանական դպրոցները՝ միաժամանակ ցույց տալով այդ դպրոցների կապը ընդհանուր լեզվաբանության այս կամ այն ուղղության հետ և նշելով առանձին դպրոցների ներկայացուցիչների ուղղությունը ընդհանուր լեզվաբանության մեջ:

Այստեղ ծավալվելու հնարավորություն չունենալով՝ ընդհանուր ձևով նշենք, որ հեղինակը իր «Հայ լեզվաբանության պատմության» հատորներում քննադրում և ըստ արժանվույն գնահատում է հայ և օտարազգի բոլոր այն քերականներին ու լեզվաբաններին, որոնք իրենց կարծիքներն են հայտնել կամ հատուկ զբաղվել են հայոց լեզվի ծագման ու ցեղակցության խնդիրներով: Աշխատության մեջ տեղ են գտել հայ հին և միջնադարյան մեկնիչներն ու քերականները և ապա հայերենի ուսումնասիրության մեջ իրենց ներդրումն ունեցող հայ և օտարազգի այնպիսի հայագետներ, ինչպիսիք են՝ Մխիթար Սեբաստացի, Սբրողեր, Միքայել Չամչյան, Հայրիկ Պետերման, Ֆրանց Բոպ, Ստեփանոս Պալասանյան, Հայրիկ Նյուրման, Արսեն Այալոնյան, Քերովրե Պատկանյան, Անտուան Մեյե, Յոզեֆ Կարստ, Ստեփան Մալխասյանց, Նիկողայոս Մառ, Մանուկ Աբեղյան, Հրաչյա Աճառյան, Գրիգոր Դա-

⁸ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2:

⁹ Տե՛ս «Вопросы языкознания», 1960, № 4:

փանջյան, Արարատ Ղարիբյան, Գուրգեն Սևակ, Գևորգ Զահուկյան:

Նշանակալից է է. Աղայանի վաստակն ու ներդրումը հայ բառարանագրության մեջ: Այս ուղղությամբ կատարած նրա երկարամյա աշխատանքների արդյունքն է Երկհատորանոց «Արդի հայերենի բացատրական բառարանը» (1976), որը պարունակում է 135.600 բառ և 11.000 դարձվածաբանական միավոր: Այս բառարանը կազմելու համար է. Աղայանն ուղղակիորեն գերմարդկային ջանքեր է գործադրել: Նա ավելի քան 1200 անուն գրական աղբյուրներից՝ գրքերից, և խոսակցական լեզվից քաղած բառերն ու դարձվածքները քարտադրել է այն նախադասություններով հանդերձ, որոնց մեջ նրանք գործածվել են, և, այսպիսով, կազմել է ավելի քան կես միլիոնանոց մի քարտարան՝ շուրջ 200.000 բառի ընդգրկումով, որի մոտավորապես կեսը բացակայում է հայերեն բառարաններից: Մավալի սահմանափակությունը հնարավորություն չի տրվել հեղինակին ընդգրկելու այդ բոլոր բառերը, և բառարանից նա որոշ սկզբունքով դուրս է թողել մոտ 70.000 բառ:

Բառարանի առաջարանում ներկայացնելով իր աշխատության ստեղծման հանգամանքները և բերելով վիճակագրական տվյալներ, որոնք արտացոլում են իր և ժամանակակից հայերենի մյուս բառարանների տարբերությունները բառամթերքի ընդգրկման տեսակետից՝ է. Աղայանն անցնում է արդի գրական լեզվի բառապաշարի շերտերի բնութագրմանը պատմական կամ ծագումնաբանական տեսակետից: Նա տարբերակում է՝ 1. համահայկական բառեր (չուր, հաց, խոսել, սառել են), 2. համագրական բառեր (ծագկավառ, շաղակրատել են), 3. նոր գրական բառեր (սավառնակ, հածանավ են), 4. մասնավոր գրական բառեր (միայն արևելահայերենին կամ միայն արևմտահայերենին հատուկ բառեր՝ մոտորով, ծրագիր—հայագիր են), 5. հին կամ գրաբարյան բառեր (կորուսիչ, կորովամտություն են), 6. աշխարհաբարյան բառեր (մատղաշ, մանկալ են), 7. բարբառային բառեր (չմուշկ, տհալ են):

է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» կ' բառապաշարի ու դարձվածաբանության ընդգրկմամբ, կ' բառապաշարի բառագիտական-լեզվաբանական մշակմամբ ու թերականական բնութագրումներով, կ' բառիմաստների ու նրանց ներբանականի ճշգրիտ բնութագրություններով ու մեկնաբանություններով հայ բառարանագրության մեծարժեք, կոթողային աշխատություններից մեկն է:

Գիտնական—լեզվաբանը մեծ ջանքեր ու եռանդ է գործադրել իր մեծ ուսուցչի՝ բազմավաստակ հայագետ Հ. Աճառյանի աշխատությունների տպագրության պատրաստման ու հրատարակության գործում: Այդ մասին է. Աղայանը գրում է. «Իր կյանքի վերջին տարիներին վատառողջ վիճակն ու աչքերի կուրությունը զրկել էին Աճառյանին աշխատելու հնարավորությունից: Այդ պատճառով էլ «Լիակատար թերականություն», ինչպես և մյուս բոլոր լեզվաբանական աշխատությունների տպագրության պատրաստելն ու հրատարակելը հանձնարարել էր տողերիս գրողին... Իր մահվանից հետո ձեռագիր վիճակում մնացած գործերի հրատարակությունը հեղինակը կտակել է դարձյալ տողերիս գրողին»¹⁰: Եվ է. Աղայանը աշակերտի երախտագիտությամբ, խոնարհությամբ ու սիրով է կատարել ուսուցչի հանձնարարությունը՝ հրատարակության պատրաստելով ու խմբագրելով «Լիակատար թերականություն» բոլոր հատորները, Առտիախի ու Վանի բարբառների ֆենոլոգիաները, «Հայոց գրերը» և ղեկավարելով «Հայերեն արմատական բառարանի» ու Աճառյանի այլ գործերի հրատարակության աշխատանքները:

Այս բոլորին մնում է ավելացնել, որ շափազանց արգասավոր է եղել նաև է. Աղայանի մանկավարժական գործունեությունը: 45 տարի անընդմեջ դասավանդելով Երևանի պետական համալսարանում՝ նա իրեն հատուկ սիրով, եռանդով ու ոգևորությամբ իր անսպառ գիտելիքներն է հաղորդել հայ երիտասարդությանը: Նա հայոց լեզվի և ընդհանուր լեզվաբանության մի քանի տասնակի ասպիրանտներ է ղեկավարել, որոնք այժմ գիտության թեկնածու—դոցենտներ կամ դոկտոր—պրոֆեսորներ են:

Եվ նրա բոլոր ուսանողները, հայ գիտական-լեզվաբանական հասարակայնությունը, նշելով սիրելի ուսուցչի և մեծ գիտնականի հորեյլյանը, ցանկանում են նրան երիտասարդական ավյուն ու ներշնչանք, քաջատղջություն, բարեկեցություն անձնական կյանքում և ստեղծագործական նորանոր մտահղացումների իրականացում՝ ի նպաստ մեր հնամենի ու արթալական լեզվի ուսումնասիրության և հայ լեզվաբանության հետագա ծաղկման ու զարգացման:

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

¹⁰ Հ. Աճառյան, Լիակատար թերականություն հայոց լեզվի, Ե., 1955, էջ XXXVI: